

4.2. Զբոսաշրջություն

4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2017-2018թթ. հունվար-դեկտեմբերին

	2017թ. հունվար- դեկտեմբեր	2018թ. հունվար- դեկտեմբեր	2018թ հունվար- դեկտեմբերը 2017թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ
<i>Ժամանողներ¹</i>			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	1 494 779	1 651 782	110.5
<i>Մեկնողներ¹</i>			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	1 481 755	1 622 791	109.5

մարդ

¹Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դրոնր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

²Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին